ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

22 ՄԱՅԻՍԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Դավթյանը, Ջոն Կիրակոսյանը, Արծրուն Հակոբյանը, Լիլիա Հարությունյանը, Հայկ Մարիկյանը, Արմեն Ջուլհակյանը, Անդրանիկ Տոնոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Արսեն Հարությունյան, Լևոն Քալանթարյան, Սամվել Անտոնյան, Գևորգ Մանուկյան, Արթուր Սավթալյան, Արսեն Ավագյան, Անուշ Կիրակոսյան, Էլմիրա Ռևազյան, ՀՈԱԿ-ների տնօրեններ, աշխատակիցներ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Գրիգորյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Մովսիսյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Ստեփանավան համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 45-Ա)

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օերնքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Ստեփանավան համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 139-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2025 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 46-Ն)

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳՈՒ ԿԱՐՈՒՍԵԼՆԵՐԻ ՏՈՄՍԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, 3-րդ մասով Ստեփանավան համայնքի ավագանին որոշում է

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի քաղաքային այգու կարուսելների տոմսերի արժեքները համաձայն կից հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 47-Ա)

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ «ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ-ԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով 03.04.2024թ. թիվ 03042024-06-0076 և 12.03.2025թ. թիվ 12032025-06-0020 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները, հաշվի առնելով, որ Ստեփանավան համայնքի, Ուրասար գյուղի 06-106-0133-0008 կադաստրային ծածկագրի 0,4 հա հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականություն հանդիսացող, «ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ-ի կողմից վարձակալած՝ Ստեփանավան համայնքի Ուրասար գյուղում գտնվող 06-106-0133-0008 կադաստրային ծածկագրով 0,4 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, էներգետիկայի գործառնական նշանակության հողամասը, թույլատրել ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով, տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի 100 %-ով /1 քմ 92,4 ՀՀ դրամ/ ընդհանուր 369600 /երեք հարյուր վաթսունինը հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ արժեքով օտարել «ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ-ին:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 48-Ա)

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ «ՍՏԵՓՁՈՐ-1»

ՍՊԸ-ԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով 03.04.2024թ. թիվ 03042024-06-0068 և 30.04.2025թ. թիվ 30042025-06-0028 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները, հաշվի առնելով, որ Ստեփանավան համայնքի, Ստեփանավան քաղաքի 06-007-1519-0013 կադաստրային ծածկագրի 0,25 հա հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանին որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականություն հանդիսացող, «ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ-ին կառուցապատման իրավունքով տրամադրված ՝ Ստեփանավան համայնքի Ստեփանավան քաղաքում գտնվող 06-007-1519-0013 կադաստրային ծածկագրով 0,25 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության, էներգետիկայի գործառնական նշանակության հողամասը, թույլատրել ուղղակի վաճառքով, գնման նախապատվության իրավունքով, տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի 100%-ով /1 քմ 1221 ՀՀ դրամ/ ընդհանուր 3052500 /երեք միլիոն հիսուներկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ արժեքով օտարել «ՍՏԵՓՁՈՐ-1» ՍՊԸ-ին:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. (կցվում է որոշում N 49-Ա)

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՎԱՐՍԻԿ ԱՍՐՅԱՆ
ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՏՈՄ ԳԱԳԻՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆՈՒՇ ԻՍՊԻՐՅԱՆ

ՎԱՆՈ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՂՈՒՆԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՊԱՊՅԱՆ

ԼԵՎՈՆ ՊԱՊՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Հասմիկ Մովսիսյանը

_____